



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների  
օգտագործում և համագործակցություն  
հանուն ռեսուրսների համալիր  
պահպանության» (ԳԱՏՕ) ծրագիր

ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ  
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: [aspired@engl.com](mailto:aspired@engl.com)

**2018թ.-ի փետրվարի 13-ին ձևաբուծարաններ կատարած այցելությունից հետո երկրորդ նախամրցութային  
հանդիպում  
Պարզաբանումներ**

**IFB # 020218-01. Հոսքաչափերի և տվյալներ գրանցող սարքավորումների ձեռքբերում և տեղադրում Արարատյան  
դաշտում**

Ամիս, ամսաթիվ՝ 13 փետրվարի, 2018թ.

Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1	Կարո՞ղ եք պատասխանել անցած նախամրցութային հանդիպման ընթացքում տեխնիկական մասնագրերի վերաբերյալ հնչեցված հարցերին:	Այո: Պատասխանները կհրապարակվեն մեր համացանցային էջում մինչև փետրվարի 13-ի աշխատանքային օրվա ավարտը:
2	ա) Ձևաբուծարաններ կատարած այցելությունից հետո նկատել ենք, որ որոշ ձևաբուծարաններում կան կիսով չափ լցված խողովակներով հորատանցքեր: Եթե հոսքաչափերը տեղադրենք այդ խողովակների վրա, չափումների ճշգրտության տոկոսը շատ ցածր կլինի:	ա) <b>IFB # 020218-01</b> հրավերում կա պարտադիր պահանջ, որ հոսքաչափերը պետք է նախատեսված լինեն ամբողջովին լցված խողովակներում $\pm 1.5\%$ ճշգրտությամբ հոսքի չափման համար: Հոսքաչափերը տեղադրելիս կապալառուն պետք է լավագույն տեխնիկական պայմաններ ստեղծի այնտեղ, որտեղ պահանջվում է, և երաշխավորի խողովակների ամբողջովին լցվածությունը՝ ՀՆՀ-ում սահմանված կարգով, ինչպես նաև առաջարկվող հոսքաչափի օգտագործման ձեռնարկի համաձայն, ջրի հոսքի ճշգրիտ չափումներ իրականացնելու նպատակով:

	<p>բ) Խողովակների ամբողջովին լցվածության տեխնիկական պայմանների ապահովման դեպքում առաջանում է մեծ խնդիր, որը կապված է պահանջվող ձևափոխությունները կատարելու նպատակով ձկնաբուծարանների լճերի ջրի հոսքի ժամանակավոր փակման հետ: Ելնելով մեր նախկին փորձից՝ ձկնաբուծարանները թույլ չեն տա նույնիսկ 10-15 րոպեով փակել ջուրը: Մինչդեռ, խողովակների ամբողջովին լցվածության ապահովման համար տրվող ճիշտ տեխնիկական լուծման աշխատանքները կարող են տևել առնվազն երկու ժամ և որոշ դեպքերում նույնիսկ մեկ օր: Ո՞վ է երաշխավորելու ձկնաբուծարաններում պահանջվող աշխատանքների իրականացման համար թույլտվությունը:</p>	<p>բ) Այս հարցին պատասխանելու համար կդիմենք մեզ հետ համագործակցող շահագրգիռ կազմակերպությանը՝ նշված խնդրի կապակցությամբ լրացուցիչ աջակցելու խնդրանքով: Բացի դրանից՝ առաջարկում ենք ձեր հայտերում ներառել յուրաքանչյուր հորատանցքի համար նախատեսված տեխնիկական լուծումը և հստակ նշել հորատանցքի տվյալ խողովակաշարի հոսքի փակման համար գնահատված ժամանակը:</p>
3	<p>Հնարավո՞ր է արդյոք հետաձգել հայտերի ներկայացման վերջնաժամկետը:</p>	<p>Այո, այն կհետաձգվի երկու օրով, և վերջնաժամկետը կլինի 18-ը փետրվարի, 2018թ.: Ինչպես նշվեց, փոփոխությունները կհրապարակվեն ԳՍՏՕ ծրագրի համացանցային էջում մինչև փետրվարի 13-ի աշխատանքային օրվա ավարտը:</p>
4	<p>Հնարավո՞ր է արդյոք հետաձգել ծրագրի իրականացման վերջնաժամկետը, այն է՝ 27 ապրիլի, 2018թ.:</p>	<p>Ոչ, դա կարող է լինել միայն ֆորս-մաժորային պայմանների առաջացման դեպքում: Բոլոր տեսակի ֆորս-մաժորային իրադարձությունների մասին պետք է անմիջապես հաղորդվի և փաստագրվի:</p>